

ՔԱՏԱՆՈՒՄ ԿՐՈՒԹՅՈՒՆ
 Պուշկուրի իսկուս
 Տարեկան 12 Ֆր.
 Վեցամսեայ 6 »
 Արսասահմանի հա-
 մար Տարեկան 15 »
 Վեցամսեայ 8 »
 Ամերիկայի համար
 Տարեկան 3 \$
 Վեցամսեայ 1.50 \$
ԿԱՆԻՍԻԿ ՎՃԱՐՆԵԼԻ
 Մանուգնան սոցիալ առաջին
 դրեւիսի համար 40 սանթիմ
 է . իսկ վերջին երեսի հա-
 մար 20 սանթիմ է . երեքին
 սանթիմ անգամներու համար
 20 Օլո գեղջ կըլլայ :

ՇԱՌՈՒՄ

Համակ եւ դրամ դրոշմ
 հմարտներու համար
 Редакция на вѣстникъ
 «Шаржумъ»
 Варна
 Redaction du journal
 «Charjoum»
 Varna (Bulgarie)
 «непрелѣтъ» лъ глѣ срънѣ
 Արսասահմանի ձեռքի
 (20 ՍԱՆԹԻՄ)
 Պուշկուրի իսկուս ձեռքի
 (15 ՍԱՆԹԻՄ)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ . ԲԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
 ԿԸ ՀՐԱՏԱՂԱԿՈՒԹԻ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱՔԱԹ ՈՐԵՐԸ

Ստիպողաբար կը խընդ-
 րենք մեր բաժանորդներէն , որ-
 պէս զի բարեհաճին իրենց ներ-
 կայ տարուան բաժնեկիները
 խմբագրութեանս ուղարկել :

Այս առթիւ կը յիշեցնենք
 նաեւ անոնց որոնց մասնաւոր
 նամակներ զրկած էինք նախորդ
 շրջանին բաժնեկիները պա-
 հանջելով , թէ այլ եւս առանց
 սէ նկատողութեան պիտի հրա-
 տարակենք իրենց անունները և
 հասցէները իբրեւ անբարեխիղճ
 խաբեբաներու :

ԲԵՍԻՆ ՇՈՒՐՁԸ

(Շար. 317 քիւն եւ վերջ)

Եթէ հասարակ ժողովուրդէն
 անցնինք աւելի զարգացածնե-
 րուն և նոյնիսկ գրագէտներուն ,
 պիտի տեսնենք որ թատրոնի
 նոյն ըմբռնումը երկար տարիներ
 տիրապետած է անոնց մէջ ալ ,
 և ամբողջ շրջան մը ունե-
 ցած ենք թատերգակներու ու-
 թոնք գործնականապէս ուզած են
 ապացուցանել ժողովուրդին այդ
 ըմբռնումին բոլոր փրկաւետու-
 թիւնը . Առաջին հայ թա-
 տերգութիւնը , «Խոսրով Մեծ» ,
 որ լոյս տեսաւ Վենետիկ , Մի-
 թարեան վարդապետի մը կողմէ ,
 խիստ հետաքրքրական յառա-
 ջաբան մը կը պարունակէր , որ
 գեռ այսօր շատերուն համար
 գուցէ պաշտելի բնաբանը ըլլայ
 աններող բարոյականութեան :
 «Ամուսնական սիրոյ մասին հրա-
 պարակաւ խօսելը նոյնն է , կը
 գրէր հեղինակ հայրը , եթէ մէկը
 արբեցողի մը առջեւ գինի խմէ ,
 որպէս զի գինեմոլները ժուժկա-
 լութիւն սորվին» , եւ կաւելցնէր .
 «Աշխարհական թատրոնը մար-
 գը կանաբարոյականացնէ , քանի
 որ հոն կիները հանդէս կը բեր-
 րուին , սիրահարութիւններ կը
 ներկայացունեն» :

Ու այս վարդապետութիւնը ի-
 րեն հետեւողներու լէգէտն մը
 ունեցաւ : Ազգը կրթելու , հայրե-

նասիրութեան վարժեցնելու նպա-
 տակով , որքան որ քիչ շատ աչ-
 քի զարնող անուններ կային մեր
 պատմութեան մէջ , բեմին վրայ
 երեւցան : Ուսուցիկ , անիմաստ ,
 կեղծ ու արուեստական տիպար-
 ներ էին առանք , որոնց բերնին
 մէջ թաւալող խոշոր բառերն ու
 բացազանչութիւնները հանդի-
 սականները կը յուզէին , ար-
 ցունքներ կը խլէին անոնցմէ ,
 բայց որոնք երբէք հետք մը ,
 բարեխաղութեան նշոյլ մը չէին
 կրնար թողուլ մեր ապրած կեան-
 քին պայմաններուն վրայ : Իսկ
 հեղինակները կը հրճուէին որ-
 քան շատ արցունք , շատ հեծ-
 կլտանք խլէին հանդիսատեսնե-
 րէն :

Այսպէս մնաց թատրոնը մեր
 մէջ : Ըմբռնումները նոր սերն-
 քին հետ սկսան քիչ քիչ փոխ-
 ուիլ . կնոջ երեւումը , նոյնիսկ
 ամենէն բաց սիրահարութեանց
 մէջ , այլեւս դատապարտելի ան-
 բարոյականութիւն մը ըլլալէ
 զարեցաւ գոնէ երիտասարդնե-
 րու շրջանակի մը մէջ՝ որ Եւրո-
 պա պտտած , աշխարհ տեսած
 նոր գաղափարներով լեցուած էր :
 Բայց այդ շրջանակը խիստ սեղմ
 էր ու Թրքահայոց մէջ չի գրտ-
 նուեցաւ թատրերգական հեղի-
 նակութիւն մը , տաղանդ մը ,
 որ իր գործերով նոր ըմբռնում-
 ները նուիրագործէր , հինին ծի-
 ծաղելիութիւնը երեւան բերէր
 և ժողովուրդին գործնականա-
 պէս մատակարարէր ճշմարիտ
 թատրոնին , կեանքի իրական
 ներկայացումին ճաշակն ու գե-
 ղեցկութիւնը : Որքան կը յիշեմ
 «Անահիտ» խմբագիրն էր որ ,
 իր «Մութ Խաւեր»ով նախնական
 փորձն ունեցաւ իրական կեանքի
 տաճար հիմնելու մեր մէջ , և որ
 սակայն առանց շարունակութեան
 մնաց :

Նատ տարբեր պիտի գտնենք
 հիմա հայ թատրոնին բարեշրջ-
 ման փուլերը , եթէ անցնինք
 Ռուսահայոց մէջ :

Հոն «ազգային դիւցազներու
 խիստ զաստկան այդ թատերգու-

թիւնները առաջին օրէն համ-
 չի տուն Ռուսահայոց ճաշակին ,
 Հոն ունկնդիրները ուսուցիկ
 պարբերութիւններէ , հեծեծա-
 գին բացազանչութիւններէ չէին
 ախորժեր : Համալսարանական-
 ները , երիտասարդները որոնք
 եւրոպական բարձրագոյն և հիմ-
 նաւոր կրթութիւն առած էին ,
 թուովի պէս պատուար կեցան
 դասական թատրոնի այդ վարա-
 կիչ հիւանդութեան իրենց մէջ
 ծաւալումին : Անոնք պահանջե-
 ցին որ բեմը առօրեայ կեանքի
 արձագանքը ներկայանայ , ճաղ-
 կէ մեր ծիծաղելիութիւնները ,
 խարաղանէ մեր վատ կողմերը
 անողոք քննադատի մը պէս :

Ու բեմին վրայ , երկսեռ բաղ-
 մութեան մը , երիտասարդներու
 և զեւաստի օրիորդներու ներ-
 կայութեան , ամուսնական սիրոյ
 համբոյրներ սկսան փոխանակուիլ
 ամոլներու մէջ , սնանկացած
 վաճառականներ գուրս եկան
 առանց երբէք հանդիւստես վա-
 ճառականները ինքզինքնին վի-
 րաւորուած զգալու , և աշակեր-
 տուհիներ՝ իրենց ուսուցիչնե-
 րուն սիրահարուած , առանց ա-
 տոր համար ներկայ եղող ուսու-
 ցիչները կամ ուսանողները և ու-
 սանողուհիները ինքզինքնին ան-
 բարոյականութեան գուռը հասած
 երեւակայելու :

Իրաւ է որ կրօնական—ազգա-
 սիրական թատրոնին մէկ քանի
 հնօրեայ պաշտպանները ուղեցին
 ազմուկ հանել , հայհոյել , մուր
 քսել ազատ երիտասարդութեան
 վրայ , բայց ռուսահայ հասարա-
 կութիւնը արհամարհեց զանոնք
 որովհետեւ իր ճամբան գտած էր :
 Ու երեւան եկաւ Բունդուկեանցը ,
 միակ ճշմարիտ թատերգակ տա-
 ղանդը որ երբէք երեւցած է
 մեր մէջ , և որուն գլուխ գոր-
 ծոցը եղող «Պեպո»ի ներկայաց-
 ման երեսնամեակը այնքան ազ-
 մուկով սօնեցին Ռուսահայերը
 զեռ շաբաթ մը առաջ :

Թատրոնին հասկացողութեան
 այս յեղաշրջումը իր անհրաժեշտ
 մէկ հետեւութիւնը ունեցաւ :
 Դերասանները կամ դերասանու-
 հիները սկսան ամենէն յարգուիլ

ամենաբարձր դիրքի անձնաւո-
 րութիւններն անգամ սկսան ի-
 րենց մեծ պատիւ համարել
 այսինչ դերասանին կամ դերա-
 սանուհիին ծանօթութիւնը և ի-
 րարու հետ մրցիլ թատերական
 գործերու մէջ առաւելագոյն ճա-
 շակ ու հասկացողութեան ունեցողի
 համբաւը վայելելու համար : Կով-
 կասի մէջ սկսան կազմուիլ հայ
 դերասանական խումբեր որոնք
 հասարակութենէն մեծ ընդու-
 նելութիւն կը գտնէին և քաղա-
 քէ քաղաք կը հրաւիրուէին ,
 ձեռքէ ձեռք կը բռնուէին : Թա-
 տերասիրութիւնը այնքան զար-
 քացաւ անոնց մէջ , որ նոյնիսկ
 ամենաբարձր պատակարարէն դուրս
 եկան դերասաններ որոնք իրենց
 պատիւ համարեցին հայ թատե-
 րական խումբին մասնակցելու :
 Մէկգի ձգելով քիչ շատ ամենա-
 յայտնի դերասանները , ռուսա-
 հայերը ունեցան Տիկին Եիւլիա
 Սրենդերեան դերասանուհին ,
 Խրիմի ամենաբարձր ընտանիք-
 ներէն մէկուն կարեւոր անդամը ,
 որ երկար տեսն ռուսահայ թատ-
 րոնի զարդն ու պարծանքը կաղ-
 մեց , Օր . Սունդուկեան , որ յատ-
 կապէս դերասանութեան պատ-
 րաստուեցաւ Բեթերսպուրկի
 զպրոցին մէջ , և զեռ ուրիշներ
 որոնց անունները ամէն օր կը
 կարգանք Կովկասի մամուլին
 մէջ :

Թրքահայերը հայ թատրոնին
 հիմը գրին . կրօնական—ազգասի-
 րական թատրոնին . Ռուսահայերը
 մենէ օրինակ առին բայց մեղի
 զերազանցեցին և ճշմարիտ
 թատրոնը ստեղծեցին : Ինչու
 մենք չի կրցանք փոխել մեր
 ըմբռնումը :

Ատոր պատճառները ուրիշ ան-
 գամ :

Իսկ այժմ՝ ահա ինչ որ փա-
 փագելի էր ինծի համար իրա-
 կանացած տեսնել :

Վառնայի մէջ երիտասար-
 դութիւն մը կայ , թատրոնը
 հասկցած և անոր սիրահարած :
 Թո՛ղ խումբ մը կազմեն երբեմն
 երբեմն ներկայացումներ տալու
 համար , և աշխատին իրենց բէ-
 ղէրգուարը պատրաստել ոչ թէ

կարողական ամենէն վարձող թա-
տերգութեանց հայերէն կամ տա-
կերէն թարգմանութիւններով,
որոնք այնքան պարզ ու անխա-
տելի են, որքան հին պարսկերէն-
կերական թատրոնները: Թո՛ղ
հայ հեղինակներ փնտռեն, զի-
մուսներ ընեն, աշակցութիւն
խօստանան, որպէսզի հայկական
արդի կեանքը, հայ ընտանեկան
և ընկերական ապրուցի տիպա-
ները բնմին վրայ պատկերանան:
Ոչ միայն ընդ լատինները, չեն
կրնար այնքան հզօրացնու սըր-
բագրել մեր բարբերը, որքան
թատրոնը ուր ճիշդ մեղի պէս
անձերու վրայ պիտի տեսնենք
այն բոլոր գերութիւնները, ցած
ու ազտոտ կողմերը որոնցմով ա-
մէնքս ալ քիչ շատ վարակուած
ենք, և որոնցմէ պիտի զգուշա-
նայինք սակայն՝ ծիծաղելի ըլլա-
լու վախով՝ երբ բեմին վրայ
հանդիպած ըլլայինք երբեմն:

Թուով մը թող կողմուի, հոգ
չէ ի պաշտօնէ գերատաններ
չըլլան ատոնք, այլ պարզ ամա-
թէօրներ, կը բաւէ որ պատուա-
ւոր անձեր ճանչցուած են հաս-
րակութենէն որուն պէտք է
հասկցնել վերջապէս թէ՛ պարոն
մը կամ օրիորդ մը բեմ ելլելով
երբէք իր պատիւէն, իր բարո-
յականէն նշանախեց մը անգամ
կորսնցուցած չըլլար:

Լ. ՍԱՐԳՍԵԱՆ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՖԻԼԻՊԷ, 14 Մայիս

Քաղաքիս երգեցիկ խումբին նա-
խաձեռութեամբ ամսոյս 12ին, շա-
բաթ իրիկուն, Պ. Ս. Զօրեանցի վար-
ժարանին մէջ գրական համեստ երե-
կոյթ մը տեղի ունեցաւ խիստ զի-
բամառելի մտաքով:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ի. ՎԱԶՈՎ

(ՈՉ ԿԻՒՂՃԱՆ ՈՉ ԿԻՍԵՆ)

I

Գիշերը խոնաւ էր ու մայր, Պրաի-
լայի փողոցները ամայացած էին:
Դեկտեմբերի պարզ մտախուզը, որ
սովորաբար Դանուբի եզերքները կի-
նայ, իր թունաւոր օդով կը խեղդէր
ուչ միացող անցորդները, որոնք կը
շապակէին իրենց սուները վերադա-
նալ: Պլպլուն լապտերները որոնք
փողոցներուն երկու կողմէն հաւասար
հեռաւորութեամբ կը ցրուէին, ի-
րենց պղտոր ու անորոշ լոյսովը հա-
զի կրնային թափանցել խիտ մշու-
շին ծաղիկները, բան մը չի պակեցնե-
լով խաւարին թանձրութենէն: Բո-
լոր խանութները ու վաճառատուն-
ները փակուած էին, ոչ մէկ լոյս ոչ
մէկ աղմուկ չի կար, լոկ ուշացած

Երգեցիկ խումբին կողմէ «Ճարու-
րիկ»-ը եռաձայն երգուելն ևտքը,
Տիկին Էլիզ Զօրեանց կարճ բայց
շատ ազդու բանաստեղծութիւն մը ը-
րաւ:

Իր նիւթն էր «կնոջ գերը»:

Ամենուն առ հասարակ դիւրահաս-
կանայի դառնալու շափ յստակ եւ
ամփոփ կերպով որոշեց թէ՛ կինը
նախնական ժամանակներէ ի վեր ի՞նչ
սեսակ վատ պայմաններու տակ ապ-
րած է եւ էրիկ խորուն հաւասար-
ունեցած իր բնական կարողութիւն-
ները բթացուցած՝ որով իր մեծ ու
օգտակար գերը չէ կրցած կատարել
ու տալ այն բազմաթիւ օգուտները՝
ինչ որ պիտի կրնար տալ եթէ նպաս-
տաւոր պայմաններու մէջ գտնուէր:
ու ատոր միակ պատասխանատուն է-
րիկ մարդն էր:

Պարզելով կնոջ անցեալը, էասաւ
ներկային, պատմեց ժամանակին
յառաջդիմութեան հետ կամաց կամաց
կնոջ վիճակին բարեօրոյցումը եւ անոր
առած թօրչները դէպի յառաջդի-
մութիւն եւ պարտականութեան գի-
տակցութիւն:

Տիկին Զօրեանց մասնաւորելով իր
խօսքը հայ կնոջ վրայ, յայտնեց թէ
նոյն վատ պայմանները, առաւել
կամ նուազ խստութեամբ, եկած են
հայ կինն ալ կաշկանդել, զանի ալ
ստիպած են պարփակուել տան չորս
պատերուն մէջ, սահմանափակուած
իր անձուկ դերին մէջ եւ դատապար-
տուած իր էրկանը քամահոնքներուն
իբրեւ կատարեալ ստրուկ:

Եւ սակայն, հակառակ աս ամե-
նուն, ինչպէս որիչ ազգերու, նոյն-
պէս եւ հայերուս մէջ, հայ կինը ու-
նեցած է իրեն պատիւ բերելու ար-
ժանի օրինակելի եւ նշանաւոր ներ-
կայացուցիչներ, որոնց անուններով
ու գործերով մեր պատմութիւնը էջեր
ունի զարդարած: Իսկ հայ ազգին
ներկայ ցաւատանջ եւ դժբաղդ վի-
ճակին մէջ ալ, հայ կինը անոր ա-
զատագրութեան գործին նուիրած
է անձնագործ հերոսուհիներ:

Ու վերջապէս բանախօս Տիկինը
ուղղելով իր խօսքը մասնաւորապէս
ներկայ օրիորդներուն ու կիներուն,
բաւ թէ ժամանակ է որ ցնցուին
եւ իրենց ուժերուն ներածին լափով

խաղամոլներու երրեմակի հայտնաբ-
նեցը ու աղաղակները կը լսուէին
փակուած դազիւններէն:

Միայն երկաթեայ բարակ ձողերէ
պաշտպանուած, լուսամուտէ մը ա-
զատ լոյս մը կուղար, Լուսամուտը
գեանին հետ հաւասար էր եւ կը
յայտնէր գոյութիւնը արթուն գիւնե-
տան, որ ատ ժամանակները Պրաի-
լայի հրապարակին վրայ առատ էր:
Եթէ մէկը գիւնետան ցած գրան մօ-
տենար եւ ուշադրութեամբ նայէր ա-
նոր, մօտակայ լապտերէ մը եկած
ակար լոյսին շնորհիւ պիտի տեսնէր,
ներկուած սախտակ մը հետեւեալ
վերտառութեամբ, Ազգային գիւնետուն
Գրոշակապէսի: Ան ատենները աս
սեսակ խայտաճամուկ վերտառու-
թիւնները նորութիւն էին: Ամէն
մէկ պուլկարի սրճարան իր նշանա-
բանը ունէր: Պուլկարներու գի-
նետունները, հրենց ուռուցիկ ու
անխմատ վերտառութիւններով կը
պարծնային: Մէկուն վրայ կը կար-
դացուէր Պուլկարական Առլոճ, միւ-
սին՝ Ֆիլիք Թօթիլ, Քար պուլկար
Վոյլոսան, երրորդին՝ Ազա Պուլկա-
րիա, երեք բացառանշական նշանե-

տան բարոյական կամ նիւթական
մասնակցութիւններն յեղափոխու-
թեան կամ ազատագրութեան գոր-
ծին, նեցուկ ըլլան հայ յեղափոխա-
կան սղամարդերուն առաջ տանելու
համար վսեմ գործը:

Տիկին Զօրեանցի աս հակիրճ բա-
նաստեղծութիւնը շատ զօրաւոր սպա-
ւորութիւն մը ձգեց ներկաներուն
զրայ, Տիկին Զօրեանց վարժ խօսողի
մը յատկութիւններով օժտուած ար-
դէն, իր կենսական նիւթին հետ իր
սահուն լեզուն, յարմար շեշտերն ու
ձայնը ա՛լ աւելի մագնիսացուցին
ուսկնդիրները որոնցմէ շատերը—
իրենց իսկ պատմելով—դեռ չեն
կշտացեր եւ աւելին կը սպասեն ե-
ղեր: Եթէ աս համեստ երեկոյթին
մէջ աչքի զարնող ցաւալի կէս մը
կար, ան ալ աս էր որ, իզական
սեռ ան գիշերը բազմացուած թիւը
չէր կազմեր, երբ մասնաւոր խօս-
ուած նիւթը կանանց վրայ էր:

Բանաստեղծութենէն ետքը՝ Տիկին Ա.
Թամիրեանց գաւնակի վրայ նուազեց
սքանչելի կտոր մը խիստ վարժ կեր-
պով, Երկրորդ անգամն է որ Տիկին
Թամիրեանց իր մասնակցութիւնը կը
նուերէ մեր հանդէսներուն, որոնց
առաջին փայլերէն մէկը կը հանդի-
սանայ: Հանդիսականները բուն
ժափահարութեամբ իրենց հիացումն
ու գոհունակութիւնը յայտնեցին ի-
րեն:

Օրիորդ Վ. Շահնազարեանց—որուն
գաշնակով կը նկերանար Տիկին Թա-
միրեանց—շատ պեղեցիկ ուսերէն
երգ մը երգեց, որուն հիանալի ձայնն
ու վարժ եւ նուրբ թոթոթիները
սքանչացում պատճառեցին ներկանե-
րուն:

Օրիորդներուն երգեցիկ խումբն
ալ Ֆրանսերէն խիստ լաւ երգ մը
երգեց բաւական յաջող կերպով: Յե-
տոյ «Ի բիւր ձայնից» ու «Երկիր
քաղաքանց» երգեց արական խումբ-
րին եւ գաշնակի մասնակցութեամբ:
Անկեղծ ըլլալու համար ըսենք որ,
աս վերջին երգին պատճառով մը ան-
յաջող անցաւ: Չի նայելով որ օ-
րիորդներու երգեցիկ խումբը—որուն
վրայ գրելու առիթը չունեցայ—դեռ
մէկ երկու ամիսէ ի վեր գոյութիւն
ունի, ասոր հետ մէկտեղ նախանձելի

րով (*): Բայց ամենէն հետաքրքրա-
շարժները, պուլկար ծխափամառնե-
րուն խանութներն էին: Առջից է
գուռը, բաց խանութ մը, փողոց
նայող ներսի կողմը, պատին վրայ
ներկայացուած է թուրք մը, զուխը
աւանդական փաթիթ մը, ձեռքը
չուպուզ մը լուսած: Անցորդը գուցէ
բնաւ չի շահադրգուէր այս պատկե-
րով, եթէ թուրքի ծուռկին տակը
գամով գոռած խօսքերը չը նկատէր,
որ հաւանօրէն հայրենասէր ծխափա-
ճառէն էր, «անկյին բուսաւորները»:
Անյին, ուրիշ ծխափամառի մը խա-
նութը, միւսնոյն նկարը կար, բայց
ոչ միւսնոյն տառերը, հոն ալ բարի
թուրքին մէկ աչքը փորուած էր:
Ուրիշ ծխափամառ մը, աւելի թուռն
հայրենասէր, եւ աւելի կատարող թըշ-
նամի թուրք, ցեղին, աս թուրքի
մօտ նկարել կուտար մերկ սուրով
հայդուկ մը որուն անսքը խեղճ
փաթիթցաւորը մորթելու պատրաս-
տութիւնը կը յայտնէր: Ընդհանրա-

(*) Զիշդ ինչպէս մենք կը նենք այ-
օր արտասահմանի մէջ:

յառաջդիմութիւն մը ցոյց կուտայ
եւ օր աւուր հետեւողներու թիւը
չատնայու վրայ է: Երեկոյթին մէջ
իրենց յաջողութիւնն ու մասնակ-
ցութիւնը լաւ տպաւորութիւն մը
թողուց մեր վրայ:

Օր. Օր. Ս. Պարտիզեան եւ նուարդ
Ա. կարճ ու բարոյալից երկու կտոր-
ներ—արձակ եւ ոտանաւոր—կարգա-
ցին:

Պ. Ս. Զօրեանց բնական դասա-
խօսութիւն մը ըրաւ թթուածինի
վրայ միւսնոյն ատեն կատարելով
նոյն նիւթին վրայ կարգ մը փոր-
ձեր հանդիսականներու հետաքրքրու-
թեան հետ զուարճութիւն ալ պատ-
ճառելով:

Յետոյ երգուեցաւ «Թող կորնչին
եւ «Բամբ որտան»:

Ժամը 12ին ներկայ եղող 100է ա.
ւելի հանդիսականները մեկնեցաւ
գոհ տպաւորութեան տակ:

Աւելորդ պիտի ըլլար ասանկ օգ-
տակար երեկոյթներու կամ յարա-
ներու ունեցած կարեւորութիւնն ու
պէտքը բացատրել, ցանկալի է որ
Ֆիլիպէի հայութեան մաքուր սիրող
կրող եւ յառաջդիմութեան ձգտող
մասը, իր ներկայութեամբ միշտ
քաջալերելով իր մտային ու սրտին
հետ խօսող աս կարգի հանդիսները
անոր անհրժեշտ պահանջ մը ըլլալ
զգացնէ: որպէս զի իրաւունք ու-
նենայ նաեւ վայելելու:

ՀՐԱՆԴ-ԺԻՐԱՅԻ

ՊՐԷՇԻ ԱՆՁՆԱՄԱՆ

Հումպէթթ թագաւորին սպան-
նիչը՝ Պրէշի անձնասպան եղած
է Բօրթո-Լօնկոնէի բանտին մէջ:

Մայիս 22ին կէս օրէն յետոյ
բանտապանները տեսնելով որ
Պրէշիի խցիկին մէջ ձայն չկայ,
կը դիտեն և կը հաստատեն որ
դժբախտ արքայազանը ինքս
զինքը խեղդած է:

Կառավարութիւնը լուսթիւն կը
պահէ մանրամասնութեանց վրայ,
սակայն լրագիրները հաւանական
ենթադրութիւններ կը նեն Պրէ-

պէս այս տեսակ խանութները աւելի
գաղթականները ու հայդուկները կը
յաճախէին: Ուսումնասիրուած տեղերը
բոլորն ալ աս հասարակ ազգայիննե-
րէն էին: «Ազգային» կը կոչուէր ա-
մէն պուլկար, որ կախազանէն
բնաւէն կամ թուրք բոնութեան
ձեռքէն փախած էր, իր միջոց-
ներուն ներածին, չափ եւ իր ուժերուն
համեմատ կ'օգնէր Հաճի Տիմիթի
եւ Ֆիլիք Թօթիլի հերոսական հրո-
սախտութեան թշուառ ու անարգուած
բեկորներուն: Այսպիսի «Ազգային»
ծխափամառ մը, հաւատքի համար իր
հայրենակիցներուն ապառիկ ծխախո-
կուտար, այն բարի յոյսով որ, օր
մը, աւելի լաւ ու յաջող ժամանակի
մը մէջ, իրեն պիտի վճարէին: Էյ,
եթէ չի վճարեն, ոչինչ: «Աստուգ
խեղճ ու հայդուկ մարդիկ են»,
ինքնիրեն կրտէր ու կը մխիթա-
ուէր:

— Էյ, Անդօ, ինձի քսանընդ
տրամ ծխախոտ կռօէ, եւ միւսին
քովը գրէ: կըսէր պատաստուն
զգեսաներով, անլուաց հակայ հայ-
դուկ մը «ազգային» ծխափամառին,
աս ատու չօրպաճիէն դրամ ու զեղի:

չի անձնաստիճանը լինելու համար կարելի չէր լինէր մասին ։
«Մաթիւոս» կրթական շրջանի մը միջոցաւ Պրէշի իր նպատակին հասած է իսկ «Քոստանտնուպոլիս» կրթական շրջանի մը խնդրումով ։
Ինչ որ ալ ըլլայ ճշմարտութիւնը սա է թէ Պրէշի չը գիտանալով բանտային ահաբեկ խրատութիւններուն որոնք մահուան պատիժի տեղ կը բռնեն Իտալիոյ մէջ , որոշած էր մահուան գիտելու Այն բացարձակ առանձնութիւնը և գերեզմանային խոր լուսթիւնը որոնք զինքը յիմարացնելու աստիճան տանջած էին , այլևս անհանգուստ զոհուած լով խեղճ Պրէշի վզին կանցնէ կապ մը և մէկ ոտուամով կը մեկնի այս աշխարհէն ուր գաղափարի մը հետեւած էր ։
Դէմք մը տեսնելու , կենդանի բարբառ մը լսելու մարմնը այնքան անհրաժեշտ պէտքեր մը պէտք տրած էր իր սրտին որ քանիցս ուզած է մէկ քանի բառ փոխանակել բանաստեղծներուն հետ և սակայն այս վերջինները իրեն յիշեցուցած են թէ բանաստեղծութեան պայմանները խիստ են և հարկ չկար պնդելու եթէ չէր բաղձար որ խոտութիւնները կրկնապատկուին ։ Այն ատեն Պրէշի կը պատասխանէր անոնց անհուն գառնութեամբ մը «պիտի տեսնէք , պիտի տեսնէք , ազատութեանս օրը հեռու չէ , պիտի զղջաք հետս » ։
Այն անկից վերջը մտածկոտ , մեղամտալիկ և յուսաբեկ եղաւ ։
Կարգաւոր գիրք ուղեց և իրեն տուին Աստուածաշունչ մը ու վարք Սրբոց մը զորս ետ դար-

ձուց ըսելով թէ իրեն ուղեգիրն պահանջումներուն համեմատ բաւականաչափ նշան չկար անոնց մէջ ։
Անցնելու շաբաթուան առաջի օրերուն մէջ Պրէշի իր բանտապահին վրայ յարձակելու ուղեց և յետոյ կատարութեան մատնուցաւ որուն վրայ բռնաշարժիկ հազարեցին , սակայն վերջին օրերուն մէջ ընթացքը փոխեց , այլևս խոտակցելու ջանքեր չըբաւ , բայց յայտնի էր որ տըլուար ծրագրի մը վրայ կործարութեան պահուէրը իր Պրէշի խցիկը մտած է , սոսկացած է մարմնոյն գիրքէն ։
Պատին վրայ Պրէշի եզունգովը գրած էր՝ վէնտէթթա , վրէժխնդրութիւն . . . ։
Ներքին գործոց նախարարը բժիշկ մը դատական պաշտօնեայ մը և բանտերու ընդհանուր ընդունիչ մը զրկած է քննութիւն կատարելու համար ։
Բժիշկը հաստատած է որ այն եղունգը որով «վրէժխնդրութիւն» բառը գրած է պատին վրայ , կոտրած և միւսը արիւնած է ։
Մարմինը պիտի փոխադրուի ամառի կղզեակի մը գերեզմանատան մէջ ։
Պրէշիի մահուան լուրը իր կնոջ որ Ամերիկա կը գտնուի , ականջը հասնելով յայտարարած է «հիմա որ Պրէշի այլևս չպարի , հարկ չկայ գաղտնիքներ ծածկել , կրնամ բացարձակ կերպով ըսել թէ երբէք դաւադրութեան մը արդիւնք չէր Հումպերթ-թօ թագաւորին սպաննութիւնը ։ Սխալ է թէ Պրէշի իբրեւ պետ մը կամ անիշխանականներու գործիք մը այս ոճիւրը գործեց ։ Ամբողջ կղերութիւնը անձ-

նական յղացումի մը արգասիք եղած է և ինք իր մտածումներովը պատրաստած է ծրագիրը առանց ու է մեղսակիցի մը օժանդակութեան» ։
Պրէշի այսօր իր նմաններուն պէս այլևս պատմութեան կը վերաբերի . անոր ընդգրկած գաղափարները որքան որ ալ հաւածանքի ենթարկուին , կը տեսնուի որ ջնջուելու արամագրութիւն ցոյց չեն տար ։ Չարիքը մարդ պատժելով արմատախիլ չըլլար . ընկերութեան արդի պայմաններն են որ Պրէշիներ կը ծնին , անգամ մը որ օրէնքները ձեւուին ժողովուրդին պահանջներուն վրայ , այլևս Պրէշիներու տխուր պատմութիւնները լսելու դժբաղդութիւնը չի պիտի ունենայ մարդկութիւնը ։
ՍԼԱԲ

«ԱՊՏԻԼ ՀԱՄԻՏ ՆԵՐՔԻՆ»ԻՆ ԳՐԱՌԻՄԸ

Ժ. Տօրիսի «Ապտիլ Համիտի ներքին»ը գրքին շուտօրէն թարգմանութիւնը Սթոքոլմի մէջ , Թուրքիոյ գեսպան Եփրիմ փաշայի խնդրանքով , կառավարութեան կողմէ գրաւուել է արտակարգ պարագաներու մէջ ։ Ոստիկաններ միեւնոյն ժամուն ներկայացրին և քաղաքին բալոր գրավաճառներուն և գրաւել են գտնուած բոլոր օրինակները ։ Յետոյ բերել տուեր են տամարները , ստուգել են ծախուած օրինակներուն թիւը և յայտարարել են թէ գրավաճառները պատասխանատու պիտի ճանչցուին այն բոլոր օրինակներուն համար , որոնք 48 ժամուան մէջ ոստիկանութեան չեն յանձնուիր ։ Նաեւ պահանջներ են այդ կործանա-

րար գրքէն պահանջներուն անունները որոնց տունը խուղարկել են և յանձնել մերժողները ձերբակալել են ։
Սթոքոլմի բնակչութիւնը ծայրահեղօրէն յուզուած է այդ գէպքէն , կրտսն թէ արտաքին գործոց և արդարութեան նախարարները ծառայի պէս կը վարուին . ապահովաբար երդուեալները պիտի հրամայեն բառնալ գրքերու գրաւումը ։
Օտար թերթերը լի են այս խնդրին վերաբերեալ մանրամասնութիւններով . միայն ֆրանսական թերթերը լուռ կը մնան , ըստ սովորականին ։
Արդեօք այս լուսթեան պատճառը ա՞յն է որ , այս վայրկեանին իսկ Բարիզի թուրք գեսպանը , Սուլթանին անունով , Սթոքի , իսկական օրինակներուն տպագրիչին դէմ դատ բանալ կը փորձէ և կը ջանայ ֆրանսական կառավարութեան հանրածանօթ հաճոյկատարութիւնն ստանալ հեղինակը աքսորելու համար ։ Աւելի պիտի վայելի Միւնիխի պէյրաքսորել ։
Խմբ. «Բոս Արեւելիս»ի

ԹԱՏՐՈՆ ՍԱՆԴՐԱԼ

Յառաջիկայ ուրբաթ գիշեր պիտի ներկայացուի ինպատակապէս երկուսու վարժարանաց անձնուէր երիտասարդաց կողմէ «կոյրին զաւակը» 5 արարուած բարոյալից թատերախաղն որ մին է վիքթօր Հիւկոյի գործերէն ։
Նաեւ ծիծաղաշարժ զաւեշտ մը երկու արար ։

վաղը եկուր՝ ըսաւ ։ Երբեմն կ'օգնէ սուտ չէ , ամա , եթէ վաղը իարէ , աս շունին դուրսը պիտի ջարդեմ ։
— Բրուտո՞վ , ինձի երկու ֆրանք փոխ տուր , կըսէր հայրուկ մը , նպարավաճառի մը ։
— Ետոնք ալ պիտի կոնծես — ևս ապրանքս կը ճանչնամ . . . աս յիսուն պանք , եւ կորսուէ . . . կը պատասխանէր Բրուտով ։ Ան տանները հայրենասիրական էր մեծ , պոստ տիտ զոս կրելը , կային նաեւ ուրիշներ , Բէրուտով , Ասէնէվ , Պալքանսօրի , Լէվսքի , Կըրմիքով , Բլանինսքի եւ այլն ։
Բայց մտնէր գինետունը , որուն լուսամտաւը , կէս գիշերին դեռ լուսափայլ էր ։
Աս գինետունը , խոր մտան մըն էր , ուր կիշնուէր որուն սանդուխով մը ։ Ձեզուենէն կախուած հին ու ազոտոտ լամբար մը ներսը կը լուսաւորէր ։
Տաք ու հեղուցիչ օդ մը , խառցած լամպայի ու ծխախոտի մուրէն ու ծուխէն եւ խոխոխներու թթուած գոլորչին այս գեանափոր նկուղը կը լնցնէր , Բարձրերը հինաուրց ըրաֆ-

ներու վրայ շարուած էին շիշերը ու գաւթները ։ Դիմացի պատին վրայ քանի մը պատկերազարդ թերթեր փակցուած էին , որոնք Հաճի Տիմիթիէի հրոսախուճիւն , Վըրպովքայի եւ Քարախիսիի մօտ տեղի ունեցած կռիւները կը ներկայացնէին , մէկն ալ Դանուրի եզերքը միեւնոյն հրոսախուճիւն հանդիսաւոր երգում ընելը կը ցուցնէր ։ Այս պատկերներուն մանրամասնութիւնները նկարագրելու պէտք չկայ , ստոնք մեր հայրենիքի ամէն անկիւնները տարածուած են եւ մեզմէ ամէն մէկը ժամանակին , ջերմեանդութեամբ ու սքանչացումով դիտած է զանոնք ։ Հետաքրքրութեան արժանի պատկեր մը եւս կար , որ ձեռքով եղած շատ կոշտ զծագրութիւն մըն էր , եւ վերոյիշեալ հղիւթի տակը փակցուցած էր ։ Չախ կողմը գիւղի պէս բան մը նկարուած էր , Բանի մը գիւղացիներ գիւղէն դուրս կելլային , ասոնց առջեւէն ծեր թուրք մը անաղին ապարօշով (չալմա) , ձեռքը ափսէ մը բռնած , մէջը հաց մը ։ Ստոնց գէմ ուրիշ գիւնեալ մարդերու խումբ մը կերեւար , ճերմակ հայուկի հա-

մազգետով , տրեխներով եւ ոսկի տաւիճ կրող գլխարկներով ։ Այս խումբին մէջտեղը հսկայ հայրուկ մը բարձր կը բռնէր կարմիր գօշոր , որ ունէր Ազատութիւն կամ մահ քնաբանը , ներքեւը խոշոր գիրքով ու տառախալներով նկարի բովանդակութիւնը կը պատմէր , նկարագրելով թուրք մեծաւորի մը հրոսախուճիւն ցցուցած յարգանքը , չեմ յիշէր որ գիւղը ։ Այս պատմութիւնը կը վերջանար աս խօսքերով «Ապրի քաջ Սթրանճան — գոջակապետը» ։
Եց հոգիէ բազկացեալ խումբ մը , խոր նկուղին տախտակամանի վրայ տեսարանը կը լրացնէր ։
Ստոնք բոլորն ալ հայդուկներ ()

էին , կամ ալ բացառապէս աւագակներ , Ասոնց էն տարիքաւոր , թիկնաւետ , լայն դէմքով , խիտ ու սեւաթոյր մօրուքով չոր ու դեղին մարդ մըն էր , եւ պատին կրթնած՝ ատեն ատեն բերնէն խիտ ծուխի ամպեր կարճակէր ։ Ան ուշադրութեամբ մտիկ կընէր , իր խօսակցներէն մէկունը վրոյցը ։ Ինչպէս կը թուի , խօսակցութիւնը չահագրգիռ էր իրեն համար , որովհետեւ երբեմն երբեմն ճակատը , որուն վրայ նոր գոցուած վէրքեր ու սպիներ կը տեսնուէին , կը խորշուէր եւ ժխտական կամ հաստատական նշան մը կընէր ։ Ան միշտ խօսողը կընդհատէր բարձր պոռալով ու հազալով ։
Թարգմ. Պ. ՍԻՐԷՄՃԵԱՆԻ
(Շարունակելի)

ՎԵՃԱՄՍԵԱՅ ՀԱՇՈՒԵԿԻՌ (՝)
Երկուսն Որոսիական Բնկերության
Հայոց Վաճառքի

ՄԱՌՏԻ	Ձր. ՍՆ.
Նախորդ վեցամսեայի ապուրկներէ հաւաքուած	27.20
Նախորդ վեցամսեայէն մնացած պատրաստի դրամ	555.50
1900 Հուն 1էն մինչև 1901 մարտ 31 բաժնեգրիներէ հաւաքուած	871.60
Նուիրատուներէ նուէր	216.87 1/2
Տիկնանց մասնաճիւղէն	129.70
Եկեղեցիի երկու անգամի պնակներէն	104.95
	1905.32 1/2
ԵԼԻՔ	Ձր. ՍՆ.
Ակնայ որբանոց զրկուած	128.75
Կեսարիոյ որբանոց զրկուած	129.70
Կարնոյ որբանոց զրկուած	130.25
Վանայ Սալնապատու աղջկանց որբանոց զրկուած	260.67 1/2
Վեց ամսուան ամբողջ ծախք	43.15
Հաւաքչի իրաւունք	571
Ֆրանքի 0/0 ութէն	45.55
Գանձելի տոմսակներ գանձակետի քով	64.10
Պատրաստի դրամ (՝)	1103.05
	1905.32 1/2

Միասնայ ընդհանուր հաշուեկշիռ

ՄԱՌՏԻ	Ձր. ՍՆ.
Բաժնեգրիներէ	1637.30
Նուիրատուներէ նուէր	293.87 1/2
Տիկնանց մասնաճիւղէն	237.90
Եկեղեցիի երեք պնակներէն	119.45
	2287.52 1/2
ԵԼԻՔ	Ձր. ՍՆ.
Վանայ Վարագայ վանքի որբանոցին	151.60
Սեբաստիոյ որբանոցին	127.—
Ակնայ որբանոցին	128.75
Կեսարիոյ որբանոցին	129.70
Կարնոյ որբանոցին	130.25
Վանայ Սալնապատու որբանոցին	260.67 1/2
Ընդհանուր ծախս	100.25
Հաւաքչի իրաւունքը	60.95
Գանձելի տոմսեր	95.30
Պատրաստի դրամ	1103.05
	2287.52 1/2

Ի դիմաց գործադիր Ժողովոյ Ատենադպիր Ատենապետ Յ. Կ. Ճանկիչեան Տր. Շախարհան Գանձապետ Խ. Ազնաւորեան Վաճառք, 15 Մայիս

(՝) Հաշիւներու մանրամասնութիւն պարունակող տախտակներ մէկ ամիս եկեղեցւոյ դուռէն կախուած պիտի մնան հետաքրքիրներու գոհացում տալու համար։
(՝) Ձէյթունի, Եղեւսի, Մշոյ, Բաղէշի, Արարկիւրի, Տիվրիկի, Կարնոյ եւ Սեբաստիոյ որբանոցներուն գրուած նամակներու պատասխանին կըսպասուի որպէսզի տարեթոշակներ զրկուին։
Յ. Գ. — Վերջին պահուս երեք որբանոցներէ ստացանք երկու որբերու ընտրութեան տեղեկագիրներ որոնց տարեթոշակներ պիտի զրկուի փութով։

ՆԱՄԱԿ ԽՄԱԿՐՈՒԹԵԱՆ
Թաղական խորհուրդս կարգալով ձեր ազգօգուտ լրագրոյ 318 թուով «Ֆէնիքս» Թոյր Օֆիսոյ ապահովագրական ընկերութեան տեղոյս գործակալ Տիար Յ. Մավիի թաղականութեանս ուղեւալ մի հեռագրոյն պատճէնն, կը փութայ հետեւեալ բացատրութիւնը տալ, ինչ որ խնդրած էիք։
Խորհուրդս «Ֆէնիքս» գործակալութեանն ստացած է 1900 փետր. 24 թուակիր մի հաշուեցոյց 242 ֆրանք 20 սանդիմի, գումար ապահովագրութեան շահետի եկեղեցւոյ, առաջնորդարանի եւ աղջկանց վարժարանի, 1898 սեպտեմբեր 21էն մինչև 1900 յունվար 1։

Սոյն 242 ֆր. 20 սնդ.ի գումարէն 1900 փետրուար 12ին թաղականութեանս կողմէ վճարուած է արգէն 150 ֆր. ոսկեդրամ, իսկ մնացեալ 92ֆր. 20 սնդ.ի վրայ բարդելով 1900 սեպտեմբեր 27ին վճարելի ապահովագրութեան շահետը ֆրանք 66, գումար 158 ֆր. 20 սնդ. չէ կըրցած վճարուել ազգային սնտուկին անձկութեանը պատճառաւ, նկատելով որ սոյն միակ պարտքը փոխանցուած չէր մեզ նախորդ թաղական խորհուրդէն, որուն կանգամակցեր նոյնինքն Տիար Մավի, այլ ուրիշ աւելի խոշորեկ պարտքեր ալ որոց մի մասն արգէն վճարուած է։

Գալով մնացորդ պարտքին կարգադրման, վերջերս Ֆէնիքսի գործակալութեան գրագիր Տիար Միհրան Ջգօնեան առաջարկեց խորհուրդոյս սոյն գումարին համար մղկուկէս ամսուան փոխանակագիր մը ընդունիլ, առ որ խորհուրդս հաւանեցաւ յանձնել մի փոխանակագիր վաւերացեալ ազգային կնիքով, բայց Տիար Ջգօնեան մերժեց մեր սոյն բանաւոր առաջարկ, պահանջելով միմիայն խորհուրդոյս երկու անգամոց անձնական ստորագրութեամբ մի փոխանակագիր (թէ պետեւ ազգային սնտուկէն օտարազգի պարտապահանջ մը ԱՏՄէտ Պիճան դարձեալ Տիար Մավիի թաղականութեան օրով, զոհացած էրաւրի խոշորեկ գումարի մը, 3012 ֆր. 25սնդ. պահանջքին համար ազգային կնիքով վաւերացեալ փոխանակագիր մը ընդունիլ), ինչ որ անկարելի դատուեցան նկատելով որ ե ոչ մի պաշտօնական մարմին կարող է իր անձնական անուամբ ազգային հատոյթ մը գանձել, ծախս մը ընել կամ ի հարկին պարտքի մուրհակ մը ստորագրել։
Սոյն անտեղի անհամաձայնութեան պատճառաւ Տ. Մավի հեռագրի միջոցաւ կը հրաւիրէ թաղական խորհուրդս վճարել սոյն գումարը երեք օրուան մէջ, հակառակ պարագային սպառնա-

լով դիմել առ որ անկ է, ինչ որ սոյն օրինակ դոյզն գումարի համար բնաւ ներելի չէ նմանօրինակ ընթացք մը բռնել ազգին դէմ, մանաւանդ ներելի չէ Տ. Մավիի համար որ ի սկզբանէ անտի ազգային ամէն տեսակ գործերու տեղեկ ամէն առթիւ պաշտպանած է ազգին շահերը, միանգամայն յարգել տուած յաշտօտարաց ազգային արժանապատուութիւնը։

Ի դիմաց Թաղ. Խորհուրդոյ Ատենադպիր Ատենապետ Ս. Գաբրիէլեան Մ. Թովմասեան Վաճառք, 18 Մայիս 1901

Յ. Գ. — Որքան որ Տ. Մավի «Ֆէնիքս» ընկերութեան կանոնագրոյն 8րդ յօդուածին Յրդ փարակրաֆին համաձայն ոչնչացուցած է իւր պայմանագրութիւնը, բայց դարձեալ խորհուրդս կը փափաքի համաձայնութեան մը յանդիլ իրեն հետ, հակառակ պարագային խորհուրդս հարկ եղած միջոցներուն պիտի դիմէ ազգապատկան հաստատութիւններն կրկին ապահովագրել տալու համար։

ԱԶԳԱՅԻՆ ԲՐՈՆԻԿ

Պ. Մօնլիք, Տուէի վերաբննիչ ատենաի խորհրդական, միջազգային իրաւագիտական վարժարանին անդամ, ևն. Լիլի մէջ ապրիլ 27ին բանախօսութիւն մը ըրեր է Հայաստանի վրայ։ Պերճաբան իրաւագետը իր ունկնդիրներուն ճանչցուցեր է հայ ժողովուրդը, պարզեր է ամենայն շափաւորութեամբ 300 հազարներու ջարդը կատարեալ խաղաղութեան ժամանակի մը մէջ. յետոյ բացատրեր է վէճերուն պատճառները, ընդհանուր օրէնսդրութիւնն ու վարչութիւնը ճանչցնելով, և յայտնել է որ անդարմանելի չարիք մը պիտի տիրէ հոն, ու քան սրբազան օրէնքը քաղաքային օրէնքէն աւելի ազդեցութիւն ունենայ թուրքիոյ մէջ։

Պ. Մօնլիք իր բնածններուն իբրեւ ապացոյց «Իրօ Արմէնիայէն» փաստեր բերեր է և ամբողջութեամբ կարգացեր է Էմիլ Վանտերվիտի նամակը։
— Թաւրէժի նախկին առաջնորդ Այվատեան հպիսկոպոս Թէհրան հրաւիրուեր է նոյն պաշտօնով։
— Հայոց կաթողիկոսը ապրիլ 25ին Սանահնի վանքէն մեկնել է Ս. Էջմիածին։ Մայիս ամսուն ալ մտադիր է եղեր Պեսարապիայի և Աստրախանի թեմերը այցելել։
— Թիֆլիսի քաղաքազուխ եւանդուլեան առաջարկեր է «Ս. Մագդաղինէի ապաստարան» մը հիմնել ընկեցիկ կիները աշխատանքի միջոցաւ ապրեցնելու համար։

— Պոլսոյ թերթերուն մէջ կարգանք որ Ուսումնական հուրդը կը թաղական տեսուչ կը գեր է գեղազորութեան ուսումնարան Տէօքմէճեանը. ստոյգ է այս լուրը, մենք ցաւալի գաղափար մը պիտի կը մենք Պոլսոյ թէ՛ Ուսումնարան խորհրդին հասկացողութեան թէ՛ վարժարաններուն վիճակ վրայ որոնց վերին հսկողութիւն Տէօքմէճեանի նման կը թաղական յատկութեանէ զուրկ դու մը կը յանձնուի։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Յ Ո Ւ Ն Ա Ս Տ Ա Ն
Հալապի գործակալութիւնը հեռագրէ թէ Յունաստանի խարարական խորհուրդը որ չէ պիւտճէին մէջ տարեկան կուրք կէս միլիոն տրախմիլի մը բանալ ամբողջացնելու համար նախին պակասները և ֆրանսացի Տիւրքոս ճարտարագէտութեան հրաւիրել որոշելու մար գնուելիք մարտանաւները։
Խորհուրդը որոշեր է նախ ու կէս միլիոն տրախմիլ յանձնել հետզհետէ գնելու համար 12 դաշտային թնդանթ լեռնային թնդանթ և 60 Մանլիխէրի հրացան։

Ան Գ. Ի Ա
Անգլիոյ խորհրդարանին յայտնի թրքասէր անդամը Ալմէտ Պարթիէթ որուն Պարթիէթ էֆէնտի հեղինակնունը կը տրուէր. սնանկացելու պիտի հրաժարի։
Հիւսիս կը հասկցուի թէ ինչ թուրքիան կը սիրէ եղեր։

Չ Ի Ն Ա Ս Տ Ա Ն
Գերմանական զօրքերը են քաշուիլ Զինաստանէն մարտանաւեր ալ հրամաններ են վերադառնալու։
Տուրքիոյ հատուցման ճաբոն, Պրանսա և Գերման համաձայնած են ուսական ջարկին. Միայն Անգլիա կը գէ իր ընդդիմութեան մէջ Միացեալ Նահանգներն անոր հետեւին։

— Ռուսական հիւպատոս կը հաղորդեն թէ Թուրք Սիանկ Գանսուի գաւառին կը գտնուի և Թուրք իշխան տասը մարդոց հետ Մոնլի փախած է։

Ս Պ Ա Ն Ի Ա
Երիտասարդներու խումբ Պարչելունաի նաւահանգստին սկսեր է քարի բռնել և կղերականներ, որոնցմէ գլուխէն վիրաւորուեր է, նաները ստիպուեր են նախ ապաստանիլ և մաքսի պարտեաններուն պաշտպանութիւնը խնդրել։ Ոստիկանութիւնը ուեր է յարձակողները։

ОТГОВОРНИКЪ:
Д-ръ М.Х.Г.РДИЧЪ ВАРՄԱ
Печ. Взаимность — ВарՄ